էր հօրը: Նա այնպիսի մի ուժգին թափով սենեակից դուրս նետոեցաւ, որ, գնդակի նման իմ մօտից անցնելով, ինձ չտեսաւ: Նա նոյն արագութեամբ վազեց մինչեւ պարտէզի դուռը, մի քանի անգամ շարժեց, երբ տեսաւ, որ փակ է, բարկացաւ եւ կրկին նետոեցաւ դէպի սրահը: Այժմ միայն տեսաւ ինձ եւ, որպէս վաղեմի ծանօթ, մօտեցաւ, գրկեց իմ պարանոցը:

— Եթէ գնայի պարտէզը, քեզ համար ծիրան կը բերէի, — ասաց ինձ:

— Ինչո՞ւ չգնացիր, — հարցրի ես, փայփայելով նրա սիրուն գլուխը:

Նա իր խոշոր, խաժ աչքերով դարձրեց դէպի ինձ եւ գանգատոելու եղանակով պատասխանեց.

— Դուռը փակ էր: Դու չես իմանում ինչ սատանայ է այդ Ծովիկը, երբ որ նա պարտէզն է գնում, դուռը միշտ փակում է, որ ես չմտնեմ: Ասում է, դու ծաղիկները փչացնում ես: Դու խօ գիտես, որ ես չեմ փչացնում:

Փոքրիկի գանգատը իր քրոջ մասին էր: Բայց ի՞նչ առիթով այդ չարաճճիի գլխին փչեց՝ ինձ վկայ բռնել, որ նա չէ փչացնում:

— Ինչպէ՞ս է քո անունը, — հարցրի ես:

— Քոթոթ, — պատասխանեց նա, ինքն էլ ծիծաղելով իր օտարոտի անոան վրայ:

— Քոթո՞թ, ի՞նչ լաւ անուն է:

— Ես էլ լաւ տղայ եմ, — ասաց նա մի առանձին պարծանքով: — Հայրիկը ինձ ասում է՝ դու քոթոթ ես, արջի քոթոթ, դու խօ տեսնում ես, որ ես քոթոթ չեմ:

— Դու քոթոթ տեսե՞լ ես:

— Տեսել եմ, մի անգամ մեր բակում պար էին ածում: Ու՛հ, ինչպէս մազոտ թաթիկներ ունէր: Մտիկ տո՛ւր իմ ձեռքերին, իմ ձեռքերը խօ այնպէս մազոտ չեն:

Նա իր սիրուն ձեռքերը դրեց իմ ափի մէջ:

— Քո ձեռքերը այնպէս չեն:

— Էլ ինչո՞ւ են ասում ինձ քոթոթ:

— Ես կասեմ հայրիկին, որ էլ չասէ:

Նա, փոխանակ շնորհակալութեան, դարձեալ գրկեց իմ պարանոցը եւ ջերմ կերպով համբուրեց ինձ:

— Ասա՛ հայրիկին, որ Ծովիկը սուտ է ասում. դու խօ իմանո՞ւմ ես, որ ես ծաղիկները չեմ փչացնում: